

Այս բոլոր ծախքերը յօժարակամ նուիրաբերութեամբ են ծածկուում:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԿԻՊՐՈՍՈՒՄ

Կիպրոսը Անգղիական կառավարութեան ձեռքը անցնելով՝ Կիպրոսի խորհրդի ձեռն է անցել և եկեղեցու արքեպիսկոպոսի ընտրութեան իրաւունքը: Խորհրդի անգամներ են տեղական յոյն, թիւրք և անգղիացի ներկայացուցիչները: Իսկ Սինոդը և հոգեւորականութիւնը բոլորովին զուրկ է այս հարցում ձայնի իրաւունքից: Այս անկանոն ձեռն պահուել էր մինչև վերջին ժամանակներս, միայն անցեալներս հնարաւոր եղաւ վերացնել, այս հակաեկեղեցական ընտրութիւնը, ուր մահմետական թիւրքը իրաւունք և ձայն ունէր, իսկ Սինոդը՝ ոչ, շնորհիւ Յունաց Կ. Պոլսոյ պատրիարք Յովակիմի եռանդուն միջամտութեան: Սա հրաւէր կարդաց Աղեքսանդրիայի, Անտիոքի և Երուսաղեմի Օրդոքոս պատրիարքներին, ուղարկել իրենց էկզարխները Կիպրոս, նոր պատրիարքի ընտրութեան գործը կարգաւորելու ու Սինոդի և Ժողովրդի հետ նոր պատրիարք ընտրելու: Ս. Պ. Յովակիմը նախապէս դրել և Կղզու Նահանգապետի թոյլտուութիւնը ստացել էր: Այսպիսով երկարատե անկանոնութիւնից յետոյ Կիպրոսը կրկին կատանայ իւր եկեղեցու կանոնական իրաւունքները: Այս յոյսը աւելի արդարանում է այն միաշունչ գործակցութեամբ, որովհետև Աղեքսանդրիայի, Անտիոքի և Երուսաղեմի պատրիարքները պատրաստակամութիւն են յայտնել Յովակիմ պատրիարքին հեռագրով:

Կ. Պոլսի պատր. կողմից պատգամաւոր է ընտրուել Անգլիայի մետրոպոլիտ Բարսեղը:

ԲԱՐՈՅԱԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԽՆԴԻՐ

Շուտով կրթութեան գործը հիմնովին փոփոխութեան կենթարկուի. իսկ դպրոցական խնդիրների մէջ բարոյակրթական գործը առաջին տեղը պիտի ընէ: Ահա մօտիկ ապագայում այս լինելիք փոփոխութիւնները աչքի առաջ ունենալով՝ Ս. Պետրբուրգի «Ծնողաց ժողովը» այս դպրոցական տարուայ վերջին մի շարք նոտեր նուիրելով՝ մշակել է կրօնական բարոյական դաստիարակութեան վերաբերեալ մի կարգ հարցեր և

առաջարկել մանկավարժներին և այլ հմուտ անձանց քննութեան: Առաջարկուած հարցերը հետևեալներն են:

1) Հարկաւոր է կրօնական դաստիարակութեան և կրօնական կրթութեան մէջ տարբերութիւն դնել:

2) Կրօնական կրթութեան մէջ հարկաւոր է որոշել մանկանց նախագալրոցական և գալրոցական շրջանները:

3) Եթէ հարկաւոր է, ապա պէտք է այդ երկու շրջաններին տարբեր դաստիարակչական եղանակներ:

4) Հիմք կայ նախագալրոցական շրջանում կրօնական դաստիարակութեան, իսկ գալրոցականում կրօնական կրթութեան:

5) Հին ուխտի կրօնակրթական նշանակութիւնը երեխաներին ի՞նչ հասակում պէտք է մատակարարել:

6) Ի՞նչ եղանակով պէտք է աւանդել նոր ուխտի պատմական և բարոյակրթական ուսուցումը կարգաբար:

7) Առաջ նոր ուխտի պատմութիւնը աւանդել յետոյ հինը, թէ՞ ընդհակառակը:

8) Հաւատոյ և կրօնի ուսուցման կանոնաւոր աւանդումը ի՞նչ եղանակով պէտք է յառաջ վարել:

9) Կրօնական դաստիարակութեան մէջ ի՞նչ տեղ ունի գրաւելու աստուածապաշտութիւնը և թէ կարո՞ղ է այն կրթական նիւթ դառնալ:

10) Հարկաւոր է կրօնի քննութիւն նշանակել:

11) Որոշ ծրագիր կարո՞ղ է ունենալ կրօնի դաստիարակութիւնը և այն չի՞ խանդարիլ գործին:

12) Կրօնից կարելի՞ է վկայական տալ:

Մնողաց շրջանը թէև ընդհանրապէս կրօնաբարոյական խնդիրներ ունէր աչքի առաջ, բայց աւելի մօտենալով կենսական խնդիրներին, չէր կարող մասնաւորել այն և չմտնել պրաւտսլաւ դաւանութեան հարցերի մէջ, մանաւանդ գալրոցներին աշակերտութեան մեծ մասը այդ եկեղեցուն են պատկանում: Այստեղից ծագեցին մի քանի որոշումներ, որ այնպէս հարկաւոր համարեցին ներկայացնել մասնագէտ և հմուտ անձանց քննութեան: Այդ որոշումներն են.

1) Մնողին են ընտրում թէ տանը և թէ դպրոցում իրենց զաւակաց կրօնը. բայց նոցա պարտքն է յարգանքով վերաբերուիլ օտարի կրօնին և այն դազափարներին, որ ժամանակի ընթացքում կծագին որդոց մէջ և անհամապատասխան կլինին ծնողաց կրօնական հայեացքներին. վերջիններս չպիտի ճնշեն այն տարբեր հայեացքները և չոչնչացնեն: Անաստուած ծնողք պէտք է զսպեն իրենց, որ որդոց վերայ բացառապէս չազդեն նոցա

կրօնական սկզբունքներ լիերայ:

2) Կրօնական դաստիարակութիւնը մանկան մատաղ հասակում չպիտի ճնշի նորա թէ մարմնական և թէ հոգեւոր ուժերը: Կրօնական դաստիարակութիւնը, որին աւելի մեծ նշանակութիւն պիտի տալ քան կրօնական կրթութեանը, կարելի է յանձնել ոչ միայն հոգեւոր դասին, այլ և այնպիսի անձանց, որոնք աստուածաբանական կրթութիւն ունին:

3) Քրիստոնեայ մանուկներին նախ նոր Կտակարանի ուսումնասիրութիւնը պիտի մատակարարել ապա թէ շին ուխտը:

4) Կրօնական աշխարհայեցողութիւն ոտանալու համար պէտք է օգտուել գիտութիւններից. բայց հարկ չկայ հերքել այն, որ գիտութեան մէջ անշարժ ու հաստատուն է համարուած: Պէտք է որոշել հաւատ և գիտութիւն. բնագրի անգիր սովորեցնելը աւելորդ է:

5) Եկեղեցի յաճախելը, որ անչափ մեծ նշանակութիւն ունի կրօնական զգացման զօրան ուլու համար, պէտք է թողնել կրօնի ուսուցչի և դաստիարակի ազդելուն: Աստուածապաշտութիւնը պէտք է ազատել այն պատմական աւանդութիւններից, որ կապ չունին ներկայ դարաշրջանի հետ: Պէտք է ժողովրդին միջոց տալ մասնակցել ժամասացութեան: Պէտք է բացատրել աստուածապաշտութեան խորհուրդը և ո՛չ թէ աղօթքներ անգիր անել տալ:

6) Որպէս զի դաստիարակութեան գործը լաւ հիմք ունենայ, պէտք է այդ առարկայի ուսուցիչը ընտրուի որոշ ժամանակով և նորա ընտրութեան մասնակցեն թէ մանկավարժական խորհուրդը, թէ ծնողք և թէ եկեղեցու վարչութեան ներկայացուցիչները:

7) Կրօնի առարկայի համար պէտք է ոչ թուանշան և ոչ էլ քննութիւն լինին:

Բացի այս կարծիքները, որ ժողովի մեծամասնութեան արտայայտութիւններն էին, եղան և մասնաւոր անձանց զեկուցումներ, որոնք աւելի հիմնական փոփոխութիւններ էին պահանջում: Իսկ Դոկմայի անդամ Գ. Ս. քահանայ Պետրովի զեկուցագիրը կառավարութեան կողմից արգելուած լինելով՝ բոլորովին չկարգացուեցաւ:

Հետաքրքիր են մեզ հայերի համար բարոյական և կրօնական կրթութեան դաստիարակութեամբ զբաղուած անձանց հեղինակութեանց կարծիքը այն կետերի առթիւ, մասնաւորապէս որ

մեզանում ոչ թէ փոփոխութիւններ և բարենորոգումներ էին պահանջում «ազգի ներկայացուցիչները» այլ «ընդհանրապէս կրօնականութեան դէմ էին, որ այնպէս խորը նստել է ժողովրդի հոգու և սրտի մէջ» (Ա. Ահարոն, ճառը այս առթիւ):

«Товарищъ»

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Կաթոլիկ բնկերութիւններ. Գերմանական կաթոլիկները Ամերիկայի ընկերութիւնը 1906 թ. 72,259 մարկ է ստացել: Գերմանիայի գերիշխանութեան տակ գտնուած երկրներում միսսիոնարական ընկերութիւնների արած ծախքը, բացի յատուկ նպատակներով արուած նուէրներից՝ հասնում է 66,125 մարկի:

Գերմանական գաղութներում գործող 12 միսսիոնարական ընկերութիւնները 163 գլխաւոր և բազմաթիւ երկրորդական կայարաններ ունեն: Այդ տեղերում 538 միսսիոնարներ են գործում (քահանաներ և եղբայրներ) 216 գթութեան քոյրեր, ընդամենը 754 եւրոպացի գործիչներ, և 1000-ից աւելի կրօնի դասատուներ կամ հրահանգիչներ՝ ընկններից:

Քեոլնի Ալբերդ Մագնուսի ընկերութիւնը 1906 թ. 65 ճիւղ ունէր, 21161,75 մարկ եկամուտով: 1906 թ. 90,000 մարկ գործածուած է ուսանողների օգնութեան համար: Դոցանից 15-ը իրաւաբանութիւն էին սովորում, 2-ը քաղաքատնտեսութիւն, 85 լեզուաբանութիւն, 12-ը մաթեմատիկայ և բնագիտութիւն, 6-ը բժշկութիւն, 1-ը անասնաբուժութիւն, 3-ը մեքենայագիտութիւն, 1-ը գիւղատնտեսութիւն:

Կան դաւանաբանական բնաւորութիւն կրող ընկերութիւններ, որոնց նպատակն է աղախիններին վարժեցնել տնային տնտեսութեան մէջ: Այդպիսի 4 ընկերութիւն կայ Բաւարիայում 1000 անդամներով: Բազենում արդէն կամենում են մի մեծ միութիւն հիմնել: Ապրիլից Միւնխենում «Hans und Herd» վերնագրով մի երկշաբաթաթերթ է հրատարակում յատուկ աղախինների ընկերութիւնների համար, որպէս նրանց բերան: Կաթոլիկ պատանիների համար հիմնուած է մի ամսաթերթ «Die Wacht» անունով: